ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2019-2021թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-հոկտեմբեր)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)` %










Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2021թ. հունվար-հոկտեմբերին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է` 104.3%, 2020թ. հունվար-հոկտեմբերին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ` 92.9%, իսկ 2019թ. հունվար-հոկտեմբերին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ` 107.1%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 1 տրլ 848 մլրդ 189.8 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատոսխանզաբար 220 մլրդ 389.6 մլն. և 204 մլրդ 790.1 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 306 մլրդ 351.4 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 35 մլրդ 268.7 մլն և 10 մլրդ 41.5 դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 2 տրիլիոն 680 մլրդ 89.2 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 403 մլրդ 187.5 մլն և 113 մլրդ 748.1 մլն դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 1  տրլ 525 մլրդ 555.5 մլն դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 111 մլրդ 824.6 մլն դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 144 մլրդ 710.5 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հոկտեմբերին 2020թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 101.1%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև  2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.5%-ի և 108.8%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հոկտեմբերին 2020թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 106.1%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 86.7%-ի և 104.5%-ի պարագայում:

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Առևտրի շրջանառության իրական աճը 2021թ. հունվար-հոկտեմբերին 2020թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 107.0%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 87.5%-ի և 108.9%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հոկտեմբերին 2020թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 106.4%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 87.2%-ի և 115.1%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 490 մլրդ 986.9 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավելի է համապատասխանաբար 163 մլրդ 941.5 մլն. և 199 մլրդ 540.8 մլն դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 1 տրիլիոն 115 մլրդ 288.2 մլն դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելի է 41 մլրդ 176.4 մլն դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 9 մլրդ 64.9 մլն դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 222 մլրդ 548.3 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավելի է համապատասխանաբար 13 մլրդ 876.2 մլն և 16 մլրդ 178.2 մլն դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 19 մլրդ 366.4 մլն դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելի է 1 մլրդ 395.5 մլն դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1 մլրդ 864 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հոկտեմբերին 2020թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 99.6%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 114.9%-ի և 120.5%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հոկտեմբերին 2020թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 100.2%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 97.1%-ի և 108.0%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հոկտեմբերին 2020թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 107.5%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.4%-ի և 99.7%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հոկտեմբերին 2020թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 107.6%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 84.7%-ի և 97.1%-ի պարագայում:

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ







Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 192 մլրդ 898.7 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 107 մլրդ 883.3 մլն և 202 մլրդ 143.1 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 262 մլրդ 319.4 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավելի է համապատասխանաբար 25 մլրդ 382 մլն և 42 մլրդ 360.7 մլն դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 390 մլրդ 439.6 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավելի է համապատասխանաբար 3 մլրդ 145.2 մլն և 30 մլրդ 452.3 մլն դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հոկտեմբերին 2020թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 64.7%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 88.2%-ի և 122.3%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հոկտեմբերին 2020թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 111.5%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.2%-ի և 109.2%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հոկտեմբերին 2020թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 102.5%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.0%-ի և 117.5%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2021թ. հունվար-հոկտեմբերին 2020թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 106.9%, 2020թ. հունվար-հոկտեմբերին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 100.9%, 2019թ. հունվար-հոկտեմբերին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 101.6%: ՍԳԻ-ն 2021թ.հոկտեմբերին 2020թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 104.2%, 2020թ.հոկտեմբերին 2019թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 99.0%, 2019թ. հոկտեմբերին 2018թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 98.4%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2021թ. հոկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 1 տրիլիոն 158 մլրդ 30 մլն դրամ, ինչը 312 մլրդ 974 մլն դրամով կամ 37%-ով ավելի է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 287 մլրդ 62 մլն դրամով կամ 33%-ով ավելի է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2021թ. հոկտեմբերի դրությամբ կազմել է 87815 մարդ, ինչը 541 մարդով կամ 0.6%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 4352 մարդով կամ 5.2%-ով ավելի է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2021թ. հոկտեմբերի դրությամբ կազմել է 59058 մարդ, ինչը 2094 մարդով կամ 2.2%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2873 մարդով կամ 4.6%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)




ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)




Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ




Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինանսավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ




Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2021թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 6 մլրդ 537.2 մլն դոլար, ինչը 784 մլն դոլարով կամ 13.6%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 116.7 մլն դոլարով կամ 1.8%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2021թ. հունվար-հոկտեմբերին կազմել է -1 մլրդ 716.1 մլն. դոլար, ինչը 85.8 մլն դոլարով կամ 5.3%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 405.2 մլն դոլարով կամ 19.1%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2021թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 2 մլրդ 410.6 մլն դոլար, ինչը 349.1 մլն. դոլարով կամ 16.9%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 260.9 մլն դոլարով կամ 12.1%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2021թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 4 մլրդ 126.6 մլն դոլար, ինչը 434.9 մլն դոլարով կամ 11.8%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 144.3 մլն դոլարով կամ 3.4%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2021թ. հունվար-հոկտեմբերին նախնական գնահատմամբ կազմել է 198860 դրամ, ինչը 12436 դրամով կամ 6.7%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 20091 դրամով կամ 11.2%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2021թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 202 մլրդ 18.1 մլն դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -23 մլրդ 675.6 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 225 մլրդ 693.7 մլն դրամ: 2020թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 205 մլրդ 896.3 մլն. դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 228 մլրդ 142 մլն դրամ և -22 մլրդ 245.7 մլն դրամ: 2019թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 58 մլրդ 642.9 մլն. դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -27 մլրդ 130.8 մլն դրամ և -31 մլրդ 512.1 մլն. դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ